# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՈՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

21.11.2014թ.

Գ. Ոստան
Հեռ. 2-33-07, 2-52-90
vostangyux@mail.ru

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Պ-Ն Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Արարատի մարզի Ոստան համայնքի ավագանու 19.11.2014թ. 7-րդ նիստի թիվ 21, 22, 23, 24 և 25 որոշումները:

Առդիր՝ 12 /տասներկու/ թերթ:

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2014թվականի N 21

### ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով Ոստան համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել թիվ 7 նիստի օրակարգը`

1. Ոստան համայնքում ընտանեկան գերեզմանոցի կազմակերպման համար բացի օրենքով նախատեսված՝ անվճար հիմունքներով տրամադրվող հողատարածքից, վճարովի հիմունքներով տրամադրվող հողատարածքի արժեքի որոշման մասին:

2. Ոստան համայնքի տարածքում գտնվող համայնքային հողերը վարձակալությամբ տալու համար մրցույթ անցկացնելու մասին:

3. Ոստան համայնքի տարածքում 2015թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

4. Ոստան համայնքի 2014թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

3. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________ ____

գ.__________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2014թվականի N 24

## ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 10 և 11-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության "Աղբահանության և սանիտարական մաքրման մասին" օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածներով, "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Սահմանել Ոստան համայնքի վարչական տարածքում 2015թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՆ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20__ թ. __________
գ.__________

Հավելված

# ՌՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015թ.-ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբեկտների համար՝
ա) մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար -------------------------------------------10000 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------10000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար --------15000 դրամ.

բգ) 1001-ից ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար---------- 17500 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝---------------------750 դրամ.

դ) 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար---------------------1250 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման , արդիականացման , աշխատանքների (բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝-----------------------------------750 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է -------------------- 1250 դրամ.

**1-3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:**

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝------ 3750 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար----3750 դրամ.

5. Համայնքի տարածքում՝
ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ ------------------------------------------------------------350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ------------------------------------------------ -----------150000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ ----------------------- 30000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար--------------------------------------------------------------------25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար--------------------------------------50 000 դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար ----------------------------------------------------------200 000 դրամ

դ) խաղատների կազմակերպման համար----------------------------------------------------500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար------------------------------------------------ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար-------------------------------------------------- 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝-------------------------------------------------------------------- 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝------------------------------------------------------- 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝------------------------------------------------------------------1000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝----------------------------------------------- 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել------------------------------------------ 300 դրամ:

10. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել---------------------------------------3 000 դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ -------------------------500 դրամ:

2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար------------- 500 դրամ:

3) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու համար կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

4) Համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանել՝

ա/ Կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 /հիսուն/ դրամ:
բ/ Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ, կամ
ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:
գ/ Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը համարել օրացուցային ամիսը:
դ/ Անշարժ գույքի սեփականատիրոջ՝ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում, նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:

ՌՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2014թվականի N 23

## ՈՍՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Ոստան գյուղական համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից ներքոհիշյալ հողատարածքները տրամադրել վարձակալությամբ մրցութային կարգով .

Լոտ 1. 0.226 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 104-024

Լոտ 2. 0,11 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 105-003

Լոտ 3. 0,16 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 105-005

Լոտ 4. 0,084 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 104-014

Լոտ 5. 0,265 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 104-015

Լոտ 6. 0,15 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 111-004

Լոտ 7. 0,64 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 112-005

Լոտ 8. 0,152 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 126-004

Լոտ 9. 0,122 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 126-008

Լոտ 10. 0,083 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 126-013

Լոտ 11. 0,047 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 157-007

Լոտ 12. 0,191 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 172-003

Լոտ 13. 0,094 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 154-005

Լոտ 14. 0,144 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 150-001

Լոտ 15. 0,194 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 136-004

Լոտ 16. 0,092 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 153-003

Լոտ 17. 0,203 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 129-002

Լոտ 18. 0,163 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 220-001

Լոտ 19. 0,102 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 268-002

Լոտ 20. 0,018 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 268-004

Լոտ 21. 0,138 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 226-004

Լոտ 22. 0,085 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 234-004

Լոտ 23. 0,175 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 231-004

Լոտ 24. 0,1 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 231-005

Լոտ 25. 0,2 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 248-001

Լոտ 26. 0,154հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 249-002

Լոտ 27. 0,193 հա 4-րդ կարգի վարելահող ծածկագիր 250-001

Լոտ 28. 0,951 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 288-004

Լոտ 29. 0,285 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 288-001

Լոտ 30. 0,367 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 288-002

Լոտ 31. 0,34 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 288-003

Լոտ 32. 0,22 հա 2-րդ կարգի վարելահող ծածկագիր 287-001

Լոտ 33. 0,283 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 252-007

Լոտ 34. 0,12 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 267-003

Լոտ 35. 0,075 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 265-001

Լոտ 36. 0,114 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 253-002

Լոտ 37. 0,32 հա 3-րդ կարգի վարելահող ծածկագիր 252-002

Լոտ 38. 0,31 հա 4-րդ կարգի վարելահող ծածկագիր 170-005

Լոտ 39. 0,142 հա բնակավայրերի այլ ընդհանուր օգտագործման հող ծածկագիր 1100-0004

Լոտ 40. 0,112 հա բնակավայրերի այլ ընդհանուր օգտագործման հող ծածկագիր 1100-0007

Լոտ 41. 0,063 հա բնակավայրերի այլ ընդհանուր օգտագործման հող ծածկագիր 1100-0009

2. Մրցութային կարգով վարձակալությամբ տրվող հողատարածքների վարձավճարի մեկնարկային գին սահմանել հողի վարձավճարի 5%-ը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

3. ԲԱՂԱԼՅԱՆ ԱՐԵՒ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20__ թ. ______________ ____

գ.____________

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2014թվականի N 22

## ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԵԳԵԶՄԱՆՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ, ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2006թ. նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն որոշման թիվ 7 հավելվածով հաստատված ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող հողատարածքի հատկացման կարգի 8-րդ և 9-րդ կետերը համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Ոստան համայնքում ընտանեկան գեգեզմանոցի կազմակերպման համար բացի օրենքով նախատեսված՝ անվճար հիմունքներով տրամադրվող հողատարածքից, վճարովի հիմունքներով տրամադրվող հողատարածքի յուրաքանչյուր 1 քմ-ի համար սահմանել 810 /ութ հարյուր տասը/ դրամ վճար:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՆ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20__ թ. ____________
գ.____________

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2014թվականի N 25

## ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Կատարել բյուջեի փոփոխություն եկամուտների մասով ավելացնել գույքահարկը իրավաբանական անձանց 1700,0 հազ. դրամով, իսկ ֆիզիկական անձանց՝ 80,0 հազ.դրամով:

Բյուջեի 09.02.02.51 հանրակրթական ուսուցում ծրագրի 4269 հատուկ նպատակային նյութեր հոդվածի 250,0 հազ. դրամը, 08.02.04.51 մշակութային միջոցառումների իրականացում ծրագրի 4216 գույքի և սարքավորումների վարձակալություն հոդվածի 250,0 հազ. դրամ գումարները և 08.01.01.51 սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրի 4727 սպորտային նպաստներ բյուջեից հոդվածի 70,0 հազ.դրամ, 4819 նվիրաբերություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների 50,0 հազ.դրամը, 01.01.01.51 կառավարման մարմինների պահպանում ծրագրի 4211 բանկային վճարներ հոդվածի 70,0 հազ.դրամը, 4221 ներքին գործուղումներ հոդվածի 50,0 հազ.դրամ գումարները տեղափոխել 11.01.02.51 համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ 4891 պահուստային միջոցներ հոդվածին:

Նշված գումարները կազմում են ընդամենը 252,0 հազ.դրամ:

11.01.02.51 համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891 պահուստային միջոցներ հոդվածւի 2535,0 հազ.դրամը հատկացնել ֆոնդային բյուջեի 04.05.01.58 մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրի 5113 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

3. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐԵՒ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20__ թ. ____________ ___

գ.__________